ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"29" օգոստոսի 2025թ. N 2071-Ա

ՀՐԱՄԱՆ

ՍՈՆԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 17-րդ մասի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջները, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 3-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի պետի (ծածկագիր՝ 22-34.3-Ղ4-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 27-ի եզրակացությունը և Սոնա Հայրապետյանի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սոնա Կարապետի Հայրապետյանին 2025 թվականի սեպտեմբերի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի

պաշտպանության բաժնի պետի (ծածկագիր՝ 22-34.3-Ղ4-2) քաղաքացիական ծառայության պաշտոնում:

2. Սոնա Կարապետի Հայրապետյանի նկատմամբ սահմանել փորձաշրջան 12 (տասներկու) ամիս ժամկետով և փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության պետ Զավեն Մկրտչյանին:

3. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

8/29/2025

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան